

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՌՈՇԱՆԱՔ ԳՈՒԴՈՒՄԹ

Փասիխանի բարբառը

Ժ.02.06 – «ԱՄԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ (իրանագիտություն)»
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՄԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Գիտական դեկավար՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝** բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մ. Լ. Խաչիկյան

բանասիրական գիտությունների թեկնածու
Թ. Կ. Չարյան

**Առաջատար
կազմակերպություն՝** Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետական
լեզվաբանական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014թ. մարտի 24-ին՝ ժամը 15:00 ՀՀ ԳԱԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում
(հասցեն՝ Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է փետրվարի 24-ին:

**Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու**

Ն.Մ. Սիմոնյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Գիլաներենի բարբառները մինչ այսօր չեն ենթարկվել համապարփակ ուսումնասիրության, չեն գտել իրենց տեղը իրանական լեզուների ու բարբառների համակարգում, չունեն գրական ավանդույթ, չկա գիլաներենի բարբառային համակարգի դասակարգման վերջնական մեխանիզմ: Այս համատեքստում հիմնավորվում է Փասիխանի բարբառի քննության արդիականությունը իրանական մասնավորապես՝ մերձկասպյան շրջանների բարբառագիտության շրջանակներում: Հավելենք նաև, որ փասիխանին ներկայացնում է գիլաներենի առավել հին ու անաղարտ վիճակը և կարևորվում է գիլաներենի զարգացման փուլերը ուսումնասիրելու բնագավառում:

Ատենախոսության հետազոտության առարկան: Աշխատանքի հետազոտության առարկան Իրանի Գիլան նահանգի Փասիխան բնակավայրում խոսվող բարբառն է, դրա քննությունը համաժամանակյա ու պատմահամեմատական տեսանկյուններից: Լեզվաբանական մեթոդների կիրարկմամբ փորձ է կատարվում ներկայացնել այս բարբառի տեղը գիլաներենի մյուս բարբառների շրջանակում: Իրանական բարբառագիտության վերջին գիտական հետազոտությունների համաձայն գիլաներենի բարբառների դասակարգումը արևելյան և արևմտյան ճյուղերի կարելի է համարել թերի և նախնական: Սույն ուսումնասիրությունն **առարկայացած է** կոնկրետ Փասիխանում խոսվող բարբառի քննության վրա, որը առանցքային նշանակություն կունենա գիլաներենի բարբառագիտության և մերձկասպյան տարածքների լեզվական ճշգրիտ պատկերը ստանալու համար:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Սույն ատենախոսության **նպատակն** է դաշտային նյութերի հիման վրա իրականացնել փասիխանիի համաժամանակյա և տարածամանակյա քննություն: Ընդ որում, նպատակ է դրվել որոշարկելու այս բարբառի տեղը գիլաներենի բարբառների համակարգում, ինչպես նաև՝ հարակից 15 գյուղերում խոսվող

լեզուների խոսվածքային մակարդակը փաստիխանի նկատմամբ: Ըստ այդմ առաջադրվել են ատենախոսության հետևյալ խնդիրները.

- 1) ներկայացնել Գիլանի և հարակից տարածքների լեզվական պատկերը
- 2) դիտարկել փաստիխանին գիլաներենի և մերձկասպյան մյուս բարբառների հետ համեմատական համատեքստում
- 3) գրանցել ու ներկայացնել բարբառային նյութը
- 4) առկա լեզվանյութը ենթարկել հնչյունական ու քերականական համաժամանակյա և տարաժամանակյա վերլուծության
- 5) ներկայացնել փաստիխանին հատուկ քերակարգերը
- 6) բառաքնության միջոցով վեր հանել բառապաշարային հիմնական շերտերը
- 7) ներկայացնել թեմատիկ բառացանկ՝ դաշտային աշխատանքերում հավաքած բառանյութի հիման վրա:

Հետազոտության գիտական նորույթը. Հետազոտության **գիտական նորույթն** այն է, որ առաջին անգամ ամբողջությամբ հավաքագրվել ու ներկայացվել է իրանական բարբառագիտությանը համարյա անծանոթ փաստիխանի լեզվական նյութը, բարբառի հնչյունաբանությունը քննարկվել է պատմական զարգացման կտրվածքով և գիլաներենի բարբառային դասակարգման համար կարևոր նյութ տրամադրվել, բարբառագիտական ոլորտ է ներմուծվել փաստիխանի քերականական ուրույն առանձնահատկությունները: Մասնավորապես բառապաշարի քննությունը առանցքային նյութ է պարունակում գիլաներենի բարբառների, զուգաբանությունների դասակարգման ընթացակարգի համար:

Աշխատանքի կիրառական նշանակությունը (գործնական ու տեսական արժեքը). Աշխատանքի **տեսական նշանակությունը** որոշվում է ներկայացված լեզվանյութի վերլուծական շարադրմամբ, ինչպես նաև ուսումնասիրության մեթոդների կիրառման արդյունավետությամբ: Ուսումնասիրությունը համալրում է գիլաներենի բարբառներին վերաբերող աշխատանքների ցանկը:

Աշխատանքի արդյունքները **գործնական** արժեք կարող են ունենալ իրանական բարբառագիտության շրջանակներում փաստիխանի ու

մերձկասպյան մյուս բարբառների հետ հարաբերակցության խնդիրների պարզաբանման համար, կարող են ծառայել իրանական բարբառագիտություն ուսումնասիրողների համար որպես դասընթացի մաս և բարբառագիտական գիտելիքները ամբողջացնելու միջոց: Գործնական քայլ է մերձկասպյան բարբառների աստլասի կազմման աշխատանքներում:

Հետազոտության մեթոդները: Ատենախոսությունը կատարվել ներքոբերյալ **մեթոդների** գործադրմամբ. նկարագրական մեթոդի միջոցով լեզվանյութի ներկայացում, պատմահամեմատական լեզվաբանության մեջ ընդունված մեթոդի հիման վրա ձայնավոր, բաղաձայն հնչյունների և բազմաթիվ բառամիավորների պատմական-ստուգաբանական քննություն: Նշված մեթոդաբանության զուգահեռաբար կիրառումը հիմնականում պայմանավորված է ատենախոսության հիմնական նպատակներից մեկով, ըստ որի՝ փաստիսանին անհրաժեշտ է ուսումնասիրել թե՛ համաժամանակյա և թե՛ տարաժամանակյա վերլուծության տեսանկյուններից՝ վերջին դեպքում հնարավորինս բացահայտելով ցեղակից գիլանական և մերձկասպյան բարբառների հետ վերջինիս ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները:

Աշխատանքի ժամանակագրական սահմանները: Ժամանակագրական առումով աշխատանքն ընդգրկում է իրանական լեզուների, այդ թվում նաև գիլաներենի և փաստիսանի զարգացման բոլոր փուլերը՝ սկսած հին իրանական լեզվական ընդհանրության դարաշրջանից մինչև միջին և նոր իրանական լեզուներ ու բարբառներ:

Ատենախոսության փորձաքննությունը: Աշխատանքի մի շարք խնդիրներ ու դրույթներ ուսումնասիրվել ու լուսաբանվել են հանրապետական գիտական «Orentalia» ժողովածուում լույս ընծայված հոդվածներում:

Աշխատանքը քննարկել ու պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, թվագրված ենթաբաժիններից կազմված երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսությանը կից ներկայացված է հավելված, որն ընդգրկում է փաստիսանի-հայերեն թեմատիկ բառացանկ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն: Ներկայացվող ատենախոսության շարադրանքում քննարկվող լեզվական նյութը հավաքվել է Իրան Գիլան նահանգի Ռաշտ շահրեստանի Փասիխան բնակավայրում կատարված դաշտային գրառումների ընթացքում: Փասիխանի և նույնանուն դեհեստանի մյուս 15 գյուղերի բնակչությունը լեզվական առումով չնայած միմյանց հասկանում են, այնուամենայնիվ վերջիններս գտնվում են փասիխանիի համեմատությամբ խոսվածքային մակարդակում: Բացի այս՝ պետք է նկատի ունենալ նաև, որ պարսկերենի և գիլաներենի (նկատի ունենք՝ Ռաշտի բարբառը) ազդեցությունը բավական զգալի է փասիխանիի հնչյունական, քերականական ու բառապաշարային մակարդակներում: Ներածության մեջ ներկայացվում է Փասիխանի աշխարհագրական դիրքը: Փասիխանը Գիլանի Ռաշտ շահրեստանի գյուղերից է և համանուն դեհեստանի կենտրոնը, որը գտնվում է Ֆուման Ռաշտ ճանապարհի 130 կմ հատվածում՝ արևմտյան Գիլանում: Փասիխան դեհեստանը հյուսիսում և հյուսիս-արևելքում հարում է Փիր Բազար դեհեստանին, արևելքում՝ Ռաշտ քաղաքին, հարավում և հարավ-արևելքում՝ Լաքան դեհեստանին, իսկ արևմուտքից Փասիխանը սահմանակցում է Մոլլասարա դեհեստանին: Փասիխան դեհեստանն ունի մոտավորապես 125 քառ. կմ տարածք և միավորում է 15 գյուղ, ինչպիսիք են Փասիխանը, Խեշթ Մասջեդը, Մուլեյմանդարաբը, Մաֆասարը, Ահմադ Գուրաբը, Նոխուղչարը, Բիջարքենարը և այլն: Ըստ 2001 թ. մարդահամարի՝ Փասիխան դեհեստանում ապրում էր 24917 մարդ՝ 4909 ընտանիք, որից Փասիխան գյուղում՝ 400 հոգի: Խոնավ, բարեխառն կլիմա ունեցող բնակավայր է: Գյուղում աճեցնում են բրինձ, թեյ, ծխախոտ: Դժվարանցանելի ճանապարհներ

ունի և թերևս այդ պատճառով քիչ է կապված Գիլանի կենտրոնական քաղաքների հետ և առավել անաղարտ է մնացել:

Փասիխան անվան ծագումնաբանությունը, ըստ ամենայնի, պետք է կապել Փասիխան գետանվան հետ, որը ողողում է բնակավայրը: Այս գետը պատկանում է Կասպից ծովի Թալեշ-Էնգելի ենթաավազանին, ունի 46 կմ երկարություն: **Pasixān** գետը անվանադրվել է գետի աշխարհագրական դիրքի նկարագրության հիման վրա՝ < Pasixān «գյուղի կամ բնակավայրի ետևում գտնվող», կազմված՝ Pəs «ետև» և գիլ. xān «գյուղ» միավորներից: Ըստ ամենայնի, գետանունը լինելով առաջնային՝ հետագայում փոխանցվել է գյուղին:

Այս բաժնում խոսվում է նաև գիլաներենի բարբառային համակարգում փասիխանիի տեղի մասին: Փասիխանին, ըստ եղած ուսումնասիրությունների, համարվում է գիլաներենի արևմտյան բարբառ և բավականին մոտ է Ռաշտի բարբառին: Արևմտյան գիլաներենի տարածման տարածքն է հյուսիսից Խոմամից և Էնգելիից մինչև Ռեզվանշահր, արևելքից Քուչսֆահանին, արևմուտքից Շեֆաթի մի մասը և Ֆումանը, հարավից ընդգրկում է Սանգարից մինչև Ռոսթամաբադի մոտակայքերը: Ներածության մեջ առանձին ենթաբաժնում քննարկվում է փասիխանի բարբառի և մերձկասպյան լեզուների մերձավորության խնդիրը: Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ փասիխանին բավական ընդհանրություններ ունի հարավային թալիշերենի և կենտրոնական թաթական բարբառների հետ: Ընդհանրապես, խոսելով մերձկասպյան լեզուների ու բարբառների մասին, պետք է նշել կարևորագույն մի հանգամանք. բնակչության պարբերական տեղաշարժերը խախտել են բարբառային բնական սահմանները, և դժվար է սահմանել բարբառային միավորների փոխհարաբերությունը որոշելու հստակ և ճշգրիտ չափանիշները: Այս բարբառներին հատուկ է բառապաշարային ընդհանրությունների մի խումբ՝ արաբերեն, պարսկերեն, թյուրքերեն բառային շերտերը, որոնք հայտնի պատճառներով մուտք են գործել մերձկասպյան այս բոլոր լեզուներ ու բարբառներ:

Ներածության մեջ քննարկման է ենթարկվել նաև գիլաներենի և դրա բարբառների ուսումնասիրության պատմությունը, որտեղ ի մի են բերվել միայն գիլաներենին վերաբերող ուսումնասիրությունները,

քանզի փասիխանիի ուսումնասիրության առաջին փորձը հեղինակի կողմից ներկայացված սույն ատենախոսությունն է:

ԳԼՈՒԽ I. Փասիխանիի հնչյունաբանությունը (ենթաբաժիններ 1.1-1.2)

Փասիխանիի հնչյունական համակարգը սույն գլխում ենթարկվել է համաժամանակյա և տարաժամանակյա քննության: Օգտագործելով պատմալեզվաբանության ընձեռած հնարավորությունները՝ բաղաձայն հնչյունները ներկայացվել են պատմական զարգացման ընթացքում: Իսկ համաժամանակյա կտրվածքով տրվել է փասիխանիի ձայնավորների ու բաղաձայնների նկարագրությունը: Գիլաներենի փասիխանի բարբառն ունի 9 ձայնավոր հնչյուն.

ā և **ī** – այս ձայնավորները պահպանվել են համեմատաբար փոքրաթիվ բառերում, իսկ դրանց գործածությունը սահմանփակվում է հնչյունական մեկ դիրքում՝ նախաշեշտային բաց վանկում, օր. *šīn* «քաղցր», *bīvā* «այրի» և այլն: Սրանք միայն այս դիրքում են տարբերվում **i** և **u** հնչյուններից իրենց տևողությամբ: Եթե **ī** և **ā** հնչյունները հայտնվում են բառի փակ և ոչ շեշտակիր վանկում, ապա և՛ որակով, և՛ տևողությամբ ամբողջովին համընկնում են **i** և **u** հնչյունների հետ, օր. *kur* «կույր», սակայն՝ *kūrā* «նա կույր է»:

i – ոչ շրթնայնացած, առաջնալեզվային, վերին բարձրացման ձայնավոր է, օր.՝ *dil* «սիրտ»:

e – ոչ շրթնայնացած առաջնալեզվային, միջին բարձրացման փակ ձայնավոր է, օր.՝ *der* «ուշ»:

a – ոչ շրթնայնացած, չեզոք, ստորին բարձրացման ձայնավոր է և նման է տաջիկերենի *a* ձայնավորին:

â – հետնալեզվային, ստորին բարձրացման ձայնավոր է, որ սովորաբար արտասանվում է մի փոքր շրթնայնացմամբ, ինչպես պարսկական *â*-ն, օր.՝ *kâr* «գործ», *âb* «ջուր»:

ə – շեշտակիր վանկում՝ առաջնալեզվային բաղաձայններից հետո հիմնականում ոչ շրթնայնացած, միջին բարձրացման ձայնավոր է, օր.՝ *dərd* «ցավ»:

u – շրթնայնացած, հետնալեզվային, մի փոքր առաջ մղված, վերին բարձրացման ձայնավոր է, օր. *pur* «լիքը»:

o – շրթնայնացած, հետնալեզվային, միջին բարձրացման փակ ձայնավոր է, օր.՝ *sob* «առավոտ», *xorom* «լավ»:

Փաստիսանին ունի 23 բաղաձայն հնչյուն: Առանձին ենթազխում քննարկվում են փաստիսանի բաղաձայն հնչյունները պատմական կտրվածքով՝ ցույց տալով դրանց զարգացման գործընթացը: Նշենք, որ պարսկերենի ազդեցությունը ընդհանրապես նկատելի է ոչ միայն գիլաներենում, այլ նաև փաստիսանիում, այսինքն՝ որոշ բաղաձայնների դեպքում փաստիսանին ցույց է տալիս պարսկական կամ հարավարևմտյան իրանական լեզուներին հատուկ հնչյունական զարգացում, մինչդեռ պատկանում է իրանական լեզուների հյուսիսարևմտյան ենթախմբին, օր.՝ փաստիսանի ենթափանցել հարավարևմտյան խմբին բնորոշ *d* < իր. **z*- (ավ. -*z*, մար. -*z*, հին պրսկ. *d*) հյուսիսարևմտյան *z*- ի փոխարեն հնչյունական զարգացումը, կամ *-s-* < հ. իր. **-θr-* (ավ. *-θr-*, հին պրսկ. *-ς-*), հյուսիսարևմտյան *-hr-* հնչյունակապակցության փոխարեն զարգացումը, *z*- < հ. իր. **j-* բառակզբում ձայնավորից առաջ, հյուսիսարևմտյան *j-* հնչյունը *ž-* ի փոխարեն և այլն: Մակայն նույն հնչյունների օրինաչափ զարգացումը նույնպես արտացոլված է քննարկվող բարբառում՝ *z*- < իր. **z*- < **g-* փաստիս. *zāmā* «փեսա», հմմտ.՝ պրսկ. *dāmād*, *j*- < հ. իր. **č-* փաստիս. *su* «վառել, այրել», հմմտ.՝ պրսկ. *su*, կամ փաստիս. *jir/zir*, բել. *jir* «տակ, ներքև», հմմտ.՝ դաս. պրսկ. *zēr*, պրսկ. *zir* և լն: Մակայն նույն հնչյունների օրինաչափ զարգացումը ևս արտացոլված է քննարկվող բարբառում՝ *z* < իր. **z* < հնդեվր.**g*, փաստիս. *zāmā*, «փեսա», հմմտ.՝ պրսկ. *dāmād*, *j* < հ. իր. **č*՝ *su* «վառել, այրել», հմմտ.՝ դաս. պրսկ. *sōz-*, ժ. պ. *su*, փաստիս. *pā*՝ «եփել», հմմտ.՝ դաս. պրսկ. *paz-*, ժ. պ. *pāz-*, կամ փաստիս. *jir/zir*, բել. *jir* «տակ, ներքև», հմմտ.՝ դաս. պրսկ. *zēr*, ժ. պ. *zir* և լն, **-pt-* > *-ft-* (հետձայնավորային դիրքում), **-vi-* > *-gu-*, **vy-* > **gy-* > *j-* (բառակզբում, ձայնավորից առաջ), **-šy-* > *-š-*, **fš-* > *s-*, **-fš-* > *-fš-* (առանձին դեպքերում), **-xš-* > *-š-*, **-rd-* > *-l-*, **-rz-* (ավ. *rz*, հին պրսկ. *rd*) > *-l-*, **-rs-* (դրափոխությանբ) > **-sr-* > *-hl-*, **dv-* > *d-*, նաև՝ **dv-* > *b-*, **-m-* > **-r-* > *-r-* և լն:

Այս գլխում քննարկվում են նաև փաստիսանիին հատուկ որոշ հնչյունաբանական երևույթներ. դրափոխություն՝ **-fr-* > *-rf-*, բառակզբի *a-* ի անկում, բառակզբի *h-* ի անկում, նախահար (պրոթետիկ) ձայնավորի առաջացում, բառավերջի անշեշտ ձայնավորի, բաղաձայնի, վանկի անկում, հնչյունների միահյուսում, ձայնավորների առնմանություն:

ԳՂՈՒՆ II Ձևաբանություն (ենթագլուխներ՝ 2.1-2.7)

Գոյական և ածական անուն: Գոյականին բնորոշ են թվի, առման, հոլովի կարգերը, սեռի կարգը բացակայում է: Գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Եզակի թվի ձևը ներկայացված է ուղղական հոլովով դրված ուղիղ հիմքով, իսկ թեք ձևերը՝ հոլովական ցուցիչների հավելումով: Հոգնակի թիվը ուղղական հոլովով (որը հոգնակի թվի հիմքն է) կազմվում է անվան հիմքին կցելով հոգնակիի կցական ցուցիչը, իսկ թեք հոլովներում հոգնակի թվի հիմքին ավելացնելով հոլովական ցուցիչները, որոնք նույնն են նաև եզակի թվում: Հոգնակի թվի ցուցիչներ են. -an, -ân < հին իր. *-ānām, -i ով ավարտվող գոյականներին՝ -ēn, օր.՝ vəxtán «Ժամանակներ», jâyan «տեղեր», dihâtēn «գյուղացիներ (եզ. - dihâti)», -hâ վերջածանցը շատ հազվադեպ հանդիպում է կայուն ձևերում, օր.՝ čizhâ «ինչ-որ բաներ», badhâ «ուշ ժամանակներ»:

Փասիխանին ունի կցական տիպի հոլովական համակարգ՝ ուղղական և թեք հոլովներ, որ պայմանականորեն կարելի է անվանել սեռական և հայցական-տրական: Ուղղական հոլովն արտահայտվում է եզակի կամ հոգնակի թվի հիմքով, մյուսները՝ համապատասխան ցուցիչով հավելված հիմքերով՝ սեռական ə, հայց.-տրական a: Հետադրությունների և հոլովական կցական տիպի վերջավորությունների միջև գոյություն ունի ծագումնաբանական ընդհանրություն: Հայց.-տրական հոլովի ցուցիչները շարունակում են իրենց հնչյունական տարատեսակությունները՝ *ra և *râ ետադրության, հմմտ.՝ հին պրսկ. rādiy «համար, հանուն» > rā, կիրառվում են արևմտաիրանական շատ լեզուներում ուղիղ խնդիր ձևավորելու, ինչպես նաև պատկանելություն, ուղղություն, հասցե ցույց տալու նպատակով: Որոշիչ-որոշյալ կապակցություններն ունեն պարսկերենին հակառակ շարադասություն, սակայն ստանում են իզաֆետային կապակցող -e ցուցիչը (եթե պարսկերենին բնորոշ շարադասություն է հանդիպում, ապա դա պարսկերենի ազդեցության հետևանք է), օր.՝ *pillā-yə zakan* «մեծ երեխաներ» և այլն: Անորոշ և որոշյալ առման արտահայտման միջոցներն են ա) հոդը -ī, բ) գոյականների ձևաբանական ձևավորման տարբերությունները, որոնք ցույց են տալիս առարկայի որոշակի կամ անորոշ լինելը:

Անորոշության առում արտահայտող իմաստակիր բառերը իմաստագրկվել են: Որպես անորոշ հոդ հանդես է գալիս «մեկ» թվականը: Որոշյալ հոդի դերով հանդես են գալիս ցուցական դերանունները, *a, ha* «այս», *u, hu* «այդ»: Բացի հոդերից, հիմնականում պարսկերենից փոխառյալ բառերում, նկատվում է *-i, -e* ցուցիչների գործածում կամ բաղիյուսում անունների հետ՝ դրան տալով նաև անորոշության կամ եզակիության երանգ:

Փասիխանիում գրանցված է ձևաբանորեն արտահայտված ածականի համեմատության երեք աստիճան: Բաղդատական աստիճանը կազմվում է ածականի հիմքից *-ter (-tar)* ածանցների օգնությամբ, օրինակ՝ *pil(l)e, pil(l)e* «մեծ», *pilletar* «ավելի մեծ», *kučik* «փոքր», *kučikta/er* «ավելի փոքր»: *Xob* «լավ» ածականի համեմատության աստիճանը տարահիմք է՝ *be(h)ter, be(h)tar* «ավելի լավ»: *bed* ածականի համեմատության աստիճանը կազմվում է հիմքի և *-ter* վերջածանցի միջոցով՝ հիմքի *-d* բաղաձայնի խլացմամբ՝ *bed(t)a/er, bet(t)a/er* «ավելի վատ»:

Գոյականը, որը համարվում է համեմատության առարկա, կիրառվում է *ja/je* հետադրության կամ *az* նախդիրի հետ: Բանաստեղծական խոսքում կիրառվում է *je* բառը, որը ավելի հաճախ հանդես է գալիս որպես նախդիր, քան հետադրություն: Ձևաբանորեն արտահայտված համեմատության գերադրական աստիճան փասիխանիում գոյություն չունի: Հատկանիշի գերադրական աստիճանը արտահայտվում է բաղդատական աստիճանից կազմված որոշակի նկարագրական կառույցով և հատուկ բառերի միջոցով՝ *hame-ja, az hame, je hame* «քան մյուսները, բոլորից», օր.՝ *a maaden hameye maadenane-ja buzurgter-e ve beter-e* «Այս հանքը բոլոր հանքերից ամենամեծն ու ամենալավն է»:

Թվական: Փասիխանիի թվականները մոտ են պարսկերենի թվականներին, մեծ մասամբ համարվում են պարսկերենից փոխառված կամ նրանց հետ բաղարկված: Փասիխանիում հիսուն թվականն ունի գործածության հետևյալ առանձնահատկությունը՝ *i* թռնե «մեկ հիսուն = հիսուն», *do* թռնե «երկու հիսուն = հարյուր», *sə* թռնե «երեք հիսուն = հարյուր հիսուն», կամ՝ *do* թռնե *-u bīst ta gāzār* «520 զագար»:

Դասական թվականները փոխառված են պարսկերենից՝ դրանք կազմավորող վերջածանցներով՝ *-um, -umīn*, օր.՝ *šišum, šišumīn*

«վեցերորդ»: Բաշխական թվականները կազմվում են քանակական թվականների կամ նույնիսկ ամբողջ բառակապակցության կրկնությամբ, օր. *sizdō-sizdō, dōvazdō ta - dōvazdō ta*: Փասիխանի բարբառում գոյություն ունեն առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններ, իսկ երրորդ դեմքի համար գործածվում են ցուցական դերանունները:

Դերանուն: Դերանուններն ունեն հոլովական ձևեր, որոնք գոյականների հետ նույնական են, սակայն հայց.-տր. հոլովում նկատվում է ցուցչի վերջածանցային ծագումը: Բայի հետ կոնկրետ հասցեատեր նշող անձնական դերանունը կարող է դրվել ինչպես հայցական-տրական, այնպես էլ սեռական հոլովով՝ *-re* հետդիրի հետ: Սեռական հոլովով դրված դերանունները. եզակի՝ *Իդ. mi, Իդ. ti, ԻԻդ. une (áni), հոգնակի՝ Իդ. ame (ami), ԻԻդ. šime (šimi), ԻԻԻդ. ušane (ušani)*: Տարբերակվել են անձնական, ցուցական, անդրադարձ-սաստկական, հարցական-հարաբերական որոշյալ, անորոշ դերանունները:

Նախդիրներ և հետդիրներ: Փասիխանի բարբառում, մերձկասպյան մյուս լեզուների նման, հետդիրները գերակշռում են նախդիրներից:

Նախդիրներից են՝ *az, bə/pə, dər, tã, bi*

Հետդիրներից են՝ *ra, ja, jir, jor, bja, sər, dore, dimə, ru* և այլն:

Շաղկապ: Շաղկապները նույնական են պարսկերենի հետ: Տարբերակվում են համադասական և ստորադասական շաղկապներ:

Մակբայ: Փասիխանիում մակբայը, որպես ինքնուրույն քերականական խումբ, հարուստ չէ: Բացի ինքնուրույն քիչ մակբայներից՝ քննարկվող բարբառում կան մի շարք բառեր, որոնք ստանում են մակբայական կիրառություն: Հիմնականում դրանք տեղի, ժամանակի և գործողության ձևի իմաստ ունեն:

Բայ: Փասիխանի բարբառն աչքի է ընկնում բավական զարգացած բայական համակարգով: Այն, ինչպես մյուս իրանական լեզուների և բարբառների պարազայում, հիմնված է երկու՝ ներկայի և անցյալի հիմքերի վրա, որոնք հանգում են հին իրանական ներկային և **-ta* վերջածանցով կազմված անցյալ դերբային, և երեք՝ սահմանական, պայմանական ու հրամայական եղանակային խմբերի վրա: Խոնարհման մեջ տարբերակվում են եզակի և հոգնակի թվերը, ինչպես նաև երեք դեմք: Ըստ կազմության՝ կան պարզ և բաղադրյալ

Ժամանակաձևեր: Այն ժամանակաձևերի փոխարեն, որոնք առանձին արտահայտություն չունեն Փասիխանի բարբառում, օգտագործվում են պարսկերենի համապատասխան ժամանակաձևերը: Փասիխանիում առանձնանում են անորոշ, անցյալ և ներկա դերբայները: Փասիխանի բարբառում գոյություն ունեն յոթ բայակազմական նախածանցներ, որ որպես ոչ գործուն մասնիկներ կցվում են բայերին: Դրանք են՝ *də-, di-, du-, va-, fa-, fu-, u-, ta-, ča-*: Փասիխանի բարբառում *b-* նախամասնիկը հանդես է գալիս *ba, bi, bu, bə* տարատեսակներով, ժխտական նախամասնիկներն են՝ *ni, ne*: Փասիխանի բարբառն ունի դիմավոր վերջավորությունների երեք տեսակ: Առաջինը գործածվում է սահմանական և ստորադասական եղանակների ներկա-ապատնի ժամանակաձևերի կազմության, երկրորդը՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևերի կազմության ժամանակ: Երրորդը գործածվում է անցյալ անկատար ժամանակաձևի կազմության մեջ: Դրանց տարբերությունները դրսևորվում են եզակի թվում, հոգնակիում վերջավորությունները նույնն են:

Ստորոգելիական հանգույցը հանդես է գալիս երկու տարատեսակով՝ կարճ և ինքնուրույն ամբողջական բառի ձևով.

Դեմք	Եզակի			Հոգնակի		
	կարճ	ժխտական	ամբողջական	կարճ	ժխտական	ամբողջական
I	<i>ə m</i>	<i>nıyə m</i>	<i>isə m</i>	<i>im</i>	<i>nıyım</i>	<i>isimi</i>
II	<i>i</i>	<i>nıyı</i>	<i>isi</i>	<i>idi</i>	<i>nıyidi</i>	<i>isidi</i>
III	<i>e</i>	<i>nıyə</i>	<i>isə</i>	<i>idi</i>	<i>nıyidi</i>	<i>isidi</i>

Աղյուսակ 1. Ստորոգելիական հանգույց

Օժանդակ բայի անցյալի ձևերը արտահայտվում են bostən «լինել» բայի միջոցով, որն ունի հետևյալ հարացույցը.

Դեմք	Ներկա ժամանակ	
	եզակի	հոգնակի
I	<i>bim</i>	<i>bim</i>
II	<i>bi</i>	<i>bid</i>
III	<i>bi</i>	<i>bid</i>

Աղյուսակ 2. bosəŋ «լինել» բայի ներկա ժամանակի խոնարհման հարացույց

Դեմք	Անցյալ ժամանակ	
	եզակի	հոգնակի
I	<i>bum</i>	<i>bim</i>
II	<i>bi</i>	<i>bid</i>
III	<i>bu</i>	<i>bud</i>

Աղյուսակ 3. bosəŋ «լինել» բայի անցյալ ժամանակի խոնարհման հարացույց

ԳԼՈՒԽ III Բառապաշարային քննություն

Բառապաշարային քննության արդյունքում փորձ է արվել ներկայացնել բարբառի բնիկ շերտը՝ բուսանունները, կենդանիների անունները, ազգակցական կապեր արտահայտող եզրերը, բնական երևույթներն անվանող ձևերը, մարմնի մասերի անվանումները, մարդկային գործունեության հիմնական ձևերը, դերանունները, թվականները, որոնք էլ ընդգրկել ենք մեր ատենախոսության ներկա ենթազվիխում:

Տարբերակվել է բառային մի քանի շերտեր.

1. Փասիխանիի բառապաշարը բնորոշվում է առկա արխաիկ ձևերի պահպանմամբ, օր.՝ *is-* «սառույց» բառամիավորը պահպանվել է նաև պահլավերենում՝ *'ys /is/* «սառցապատում» ձևով, որն էլ պետք է ենթադրել եղել է այդ լեզվում «սառույց»-ի նշանակյալը. ծագում է հնդեվր. **eiso-* նախաձևից, որը իրանականում տալիս է **aiša-> *aisa-> is* զարգացումով: Մակայն մյուս իրանական լեզուներում նախաձև է հանդես գալիս **aixa-* ն, որը տալիս է ավ. *aexa-*, պրսկ. *yax*, օսերեն *ex* «սառույց» և այլն:

2. Փասիխանիում առանձնանում է ենթաշերտային փոքր բառաֆոնդ, որը պահպանվել է տեղի բնակչության իրանականացումից հետո՝ որպես հին գիլանցիների լեզվական «հետքեր», օր.՝ **pil(1)ə** - «մեծ» բառը բառապաշարային այն միավորներից է, որը չի բացատրվում իրանական լեզվանյութի վրա և համարվում է ենթաշերտային բառամիավոր: Այս բառամիավորը նույն նշանակությամբ հանդիպում է հարավային թալիշերենում ու կենտրոնական թաթական բարբառներում՝ *pillæ*, ինչպես նաև՝ զագաքիում:

3. Բարբառի բառաֆոնդում պահպանվել են բառամիավորներ, որոնք դուրս են մնացել գիլաներենի բառապաշարից, օր.՝ *gusardan* - «խառնել» բառը ծագում է հին իր. **yi-sāra*- < **sarH*- «խառնել» նախածնից, որն արտացոլվել է նաև ավ. *sar*- «խառնել» արմատի մեջ: Հին իր. **yi-sāra*- նախածնն է վկայված նաև սողդերեն *wsyrd'rt* «նախառնեց» բայական ձևի մեջ:

4. Քննարկվող բարբառում առկա է բառերի ոչ փոքր հատված, որոնք, ըստ էության, փոխառություն են պարսկերենից, բացատրվում է դա պարսկերենի՝ Իրանի պաշտոնական լեզու լինելու հանգամանքով: Փոխառություններ առկա են նաև արաբերենից, թյուրքերենից: Ընդ որում, այս բառաշարքը վերաբերում է հիմնականում պաշտոնական, կրթական, տեխնոլոգիական բնագավառներին:

5. Բառապաշարային ուսումնասիրության արդյունքում ի հայտ է եկել նույնանուն բառերի մի խումբ, որոնք իմաստային տարբերություն են ցույց տալիս գիլաներենի նկատմամբ, օր. *dār* փասիխ. «ծառ», գիլ.՝ միայն «փայտ» և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով ատենախոսության մեջ առաջ քաշված խնդիրներն ու ուսումնասիրության արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ՝

1. Հարավկասպյան տարածքի Գիլան նահանգը առանձնանում է յուրահատուկ էթնոլեզվական կազմով: Գիլաներենի բարբառային համակարգը գտնվում են ուսումնասիրության նախնական փուլում, այս առումով, Փասիխանի բարբառի և հարակից խոսվածքների ուսումնասիրությունը առաջին քայլերից է տարածքի լեզվական նկարագիրը վեր հանելու գործում:

2. Ի մի բերելով Գիլանում խոսվող լեզուների վերաբերյալ կատարված լեզվաբանական ու բարբառագիտական աշխատանք-

ները՝ պետք է ասել, որ այս բնագավառում չկա համապարփակ գիտական ուսումնասիրություն, իսկ կատարված հետազոտությունները մեծ մասամբ նկարագրական բնույթի են:

3. Ներկայացվող ատենախոսության շարադրանքում քննարկվող լեզվական նյութը հավաքվել է Գիլան նահանգի Ռաշտ շահրեստանի Փասիխան բնակավայրում հեղինակի կատարած դաշտային գրառումների ընթացքում: Փասիխանը համանուն դեհեստանի կենտրոնն է և գտնվում է Ֆուման Ռաշտ ճանապարհի 130 կմ հատվածում՝ արևմտյան Գիլանում: Փասիխան դեհեստանն ունի մոտավորապես 125 քառ. կմ տարածք և միավորում է 15 գյուղ՝ ինչպիսիք են Փասիխանը, Խեշթ Մասջեդը, Սուլեյմանդարաբը, Մաֆաարը, Ահմադ Գուրաբը, Նոխուդչարը, Բիջարքենարը և այլն: Ըստ 2001 թ. մարդահամարի Փասիխան դեհեստանում ապրում է 24917 մարդ՝ 4909 ընտանիք, որից Փասիխան գյուղում՝ 400 հոգի:

4. Գիլաներենը իրանական հյուսիս-արևմտյան, հարավկասպյան ենթաճյուղի լեզուներից է և ունի բարբառային երկու ճյուղ՝ արևելյան և արևմտյան, որոնց սահմանաբաժանն է Սեֆիդդուդը: Այս բաժանումը կիրարկելի է նաև այժմ և քննարկվող բարբառը համարվում է գիլաքիի արևմտյան բարբառներից: Ըստ էության, փասիխանին ներկայացնում է գիլաներենի առավել հին ու անաղարտ փուլը:

5. Փասիխանին հարում է մերձկասպյան մյուս լեզուներին ու բարբառներին, մասնավորապես մոտ է հարավթալիշական Մասուլեի, Մասալի բարբառներին, կենտրոնական թաթական բարբառներին: Հարավթալիշական բարբառների հետ փասիխանին ունի հնչյունական, ձևաբանական, բառապաշարային զգալի ընդհանրություններ: Միանշանակ նշված ընդհանրությունները գիլաներենի ազդեցությամբ բացատրել հնարավոր չէ, քանզի որոշ ընդհանրություններ հատուկ են միայն փասիխանիին ու հարավային թալիշերենին, մինչդեռ դրանք չեն հանդիպում Սեֆիդդուդից արևելք ընկած գիլաներեն բարբառներում: Հակառակ ազդեցությունը այսինքն թալիշերենից գիլաներենի բարբառների վրա, ևս դժվար մեկնաբանելի է և ուսումնասիրության կարիք ունի:

Խոսելով մերձկասպյան լեզուների ու բարբառների մասին արձանագրվել է կարևորագույն մի հանգամանք՝ բնակչության պարբերական տեղաշարժերը խախտել են բարբառային բնական

սահմանները և դժվար է սահմանել բարբառային միավորների փոխհարաբերությունը որոշելու հստակ և ճշգրիտ չափանիշները: Կարևոր մի առանձնահատկություն, որ նշմարելի է այստեղ՝ կապված այս տեղաշարժերի հետ, լեզվական “միահյուսումը կամ միավորումն” է, բայց ոչ թե միևնույն լեզվի տարբեր բարբառների, այլ՝ նաև տարբեր լեզուների, օրինակ հյուսիսային թալիշերենի և հյուսիսային թաթերենի լեզվական մի շարք մակարդակներում միահյուսումը պայմանավորված է այս երկու լեզուների մերձավոր համակեցության հետ, մինչդեռ, նույն հյուսիսային թալիշերենը շատ ավելի քիչ ընդհանրություններ է կիսում հարավային թալիշերենի հետ: Սրանով է պայմանավորված նաև բարբառախոսների թվաքանակի փոփոխությունները, հատկապես որ պարսկերենի հետ դիգլոսսիայի ընթացքում շատ բարբառներ ուղղակի պարսկականացվում են:

6. Լինելով գիլաներենի արևմտյան բարբառներից՝ փասիխանին հատկապես մոտ է խոսողների թվով քանակապես գերակշռող և տարածվածությամբ ամենամեծ Ռաշտի բարբառին: Ուսումնասիրվածության տեսակետից փասիխանին գտնվում է նախնական փուլում, մինչդեռ Ռաշտի բարբառը ամենաուսումնասիրվածն է և միևնույն ժամանակ համեմատության ելակետ է հանդիսացել Փասիխանին բարբառ որակելու համար:

7. Փասիխանի բարբառն ունի 9 ձայնավոր և 22 բաղաձայն հնչյուն: Պատմական զարգացման առումով փասիխանի բաղաձայն հնչյունները դրսևորում են հյուսիսարևմտյան զարգացում՝ որոշ դեպքերում ցույց տալով նաև հարավարևմտյան օրինաչափություններ: Փասիխանի են թափանցել հարավարևմտյան խմբին բնորոշ d- < իր. *z- (ավ. z-, մար. z-, հին պրսկ. d-) հյուսիսարևմտյան z- ի փոխարեն հնչյունական զարգացումը, կամ ` -s- < h. իր. *-or- (ավ. -or-, հին պրսկ. -ç-) զարգացումը՝ հյուսիսարևմտյան -hr- հնչյունակապակցության փոխարեն, z- h. իր. *j- բառակերպում ձայնավորից առաջ՝ հյուսիսարևմտյան ž- ի փոխարեն և այլն: Սակայն նույն հնչյունների օրինաչափ զարգացումը ևս արտացոլված է քննարկվող բարբառում՝ z- < իր. *z- < *g-, փասիխ. zârnâ, «փեսա», -j- < h. իր. *-č-՝ suj «վառել, այրել», jir/zir «տակ, ներքև», -hr- < h. իր. *-or-, šahr/šar «քաղաք» ևլն:

8. Ձևաբանության մեջ հատկապես շոշափելի է պարսկերենի ազդեցությունը, որը երբեմն միջնորդավորված է Ռաշտի բարբառով: Փասիխանին ունի կցական տիպի հոլովական համակարգ ուղղական և երկու թեք հոլովներ, որը պայմանականորեն կարելի է անվանել սեռական և հայցական-տրական: Ուղղական հոլովն արտահայտվում է եզակի կամ հոգնակի թվի հիմքով, մյուսները՝ համապատասխան ցուցիչով հավելված հիմքերով՝ սեռական զ, հայց.-տրական a:

9. Որոշիչ-որոշյալ կապակցությունները ունեն պարսկերենին հակառակ շարադասություն, սակայն ստանում են իզաֆետային կապակցող ցուցիչ (եթե պարսկերենի շարադասություն է հանդիպում, ապա դա պարսկերենի ազդեցության հետևանք է), *op.* pilla-յ՝ zakan «մեծ երեխաներ», surx-ձ ցւլ «կարմիր ծաղիկ», særd-ձ aw «սառը ջուր», kul-ձ čaqu «ուր դանակ», rāstə gəb «ճշմարիտ խոսք» և այլն:

10. Անորոշ և որոշյալ առման արտահայտման միջոցները համարվում են ա) հոդերը, բ) գոյականների ձևաբանական ձևակերպման տարբերությունները, որոնք ցույց են տալիս առարկայի որոշակի կամ անորոշ լինելը: Որպես անորոշության հոդ հանդես է գալիս «մեկ» թվականը, *op.* tiləfunč'i ki ita duxtər bu guš'ia usadə «հեռախոսավարուհին, որ մի աղջիկ էր, վերցրեց լսափողը»: Որոշյալ հոդի դերում հանդես են գալիս ցուցական դերանունները, *a, ha* «այս», *u, hu* «այդ»: Մրանք շարունակում են հին իրանական ցուցական դերանունների գործառույթը՝ մասնակիորեն կորցրած կոնկրետ տարածական նշանակությունը:

11. Փասիխանիի թվականները մոտ են պարսկերենի թվականներին, մեծ մասամբ համարվում են պարսկերենից փոխառնված կամ նրանց հետ բաղաբկված: Միակ տարբերությունը հիսուն թվականի գործածության ձևերն են՝ *i* pəné «մեկ հիսուն = հիսուն», *do* pəné «երկու հիսուն = հարյուր», *sə* pəné «երեք հիսուն = հարյուր հիսուն», կամ՝ *do* pəné - *u bist ta gāzār* «520 գազար»:

12. Փասիխանի բարբառում գոյություն ունեն առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններ, իսկ երրորդ դեմքի համար գործածվում են ցուցական դերանունները: Դերանուններն ունեն հոլովական ձևերը, որոնք գոյականների հետ նույնական են, սակայն հայց.-տրական հոլովում նկատվում է ցուցչի վերջածանցային

ծագումը: Սեռական հոլովով դրված դերանուններին՝ *mi, ti, une (úni), ame (ami), šime (šimi), ušane (ušani)*, ավելանում է *šin* կցականը, որն արտահայտում է պատկանելություն և համապատասխանում է պարսկերենի *māl* «ունեցվածք» միավորին, օր.՝ *u kitāb mi šin-e* «այս գիրքը իմն է»:

13. Փասիխանի բարբառում հետդիրները գերակշռում են նախդիրներին. նախդիրներն են՝ *az, bə/pə, dər, tá, bā, bi*, հետդիրներն են՝ *re, ja, jir, jor, bija, vasi, sər, dore, dimə, ru* և այլն: Գոյականները (անուններն ընդհանրապես), ինչպես նաև դերանունները հետդիրներից առաջ սովորաբար հանդես են գալիս սեռական հոլովով:

14. Փասիխանի բարբառի բայական համակարգը, ինչպես մյուս իրանական լեզուների և բարբառների պարագայում, հիմնված է երկու՝ ներկայի և անցյալի հիմքերի, որոնք հանգում են հին իրանական ներկային և **-ta* վերջածանցով կազմված անցյալ դերբային, և երեք՝ սահմանական, պայմանական ու հրամայական եղանակային խմբերի վրա: Խոնարհման մեջ տարբերակվում են եզակի և հոգնակի թվերը, ինչպես նաև երեք դեմք: Ըստ կազմության կան պարզ և բաղադրյալ ժամանակաձևեր: Այն ժամանակաձևերի փոխարեն, որոնք առանձին արտահայտություն չունեն Փասիխանի բարբառում, օգտագործվում են պարսկերենի համապատասխան ժամանակաձևերը:

15. Բառապաշարային քննության արդյունքում մեզ թույլ է տալիս տարբերակվել են հետևյալ բնութագրումները. Փասիխանին առանձնանում է բառապաշարում առկա արխաիկ ձևերի պահպանմամբ, որոնցից է օրինակ *is* «սառույց» բառամիավորը: Փասիխանիում առանձնանում է ենթաշերտային փոքր բառաֆոնդ, որը պահպանվել է տեղի բնակչության իրանականացումից հետո՝ որպես հին գիլանցիների լեզվական «հետքեր», օր.՝ *pil* «մեծ»: Բարբառի բառաֆոնդում պահպանվել են բառամիավորներ, որոնք դուրս են մնացել գիլաներենի բառապաշարից, առկա է բառերի ոչ փոքր հատված, որոնք, ըստ էության, փոխառություն են պարսկերենից, ինչը բացատրվում է պարսկերենի որպես Իրանի պաշտոնական լեզու լինելու հանգամանքով: Ընդ որում, այս բառաշարքը վերաբերում է հիմնականում պաշտոնական, կրթական, տեխնոլոգիական բնագավառներին: Բառապաշարային

ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկան նույնանուն բառերի մի խումբ, որոնք իմաստային տարբերություն էին ցույց տալիս գիլաներենի նկատմամբ, բարբառն անմասն չի մնացել արաբական և թյուրքական փոխառություններից, ինչը պետք է դիտարկել պարսկերենում ու Իրանի մյուս բարբառներում ասկա այս բառաֆոնդի պատճառաբանվածությամբ: Թյուրքական փոխառություններն ավելի ուշ բնույթ ունեն և պայմանավորված են Իրանի հյուսիսային շրջաններում թյուրքախոսության տարածմամբ, մասնավորապես անցած դարակզբից:

ՍՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ
ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. **Գոլդուսթ, Ռ.**, «Ձայնավորները Գիլաքի-Փասիխանի բարբառում», *Orientalia*, հ. XI, Երևան, 2010թ., էջ 134-136:
2. **Գոլդուսթ, Ռ.**, «Շեշտը և ձայնավոր հնչյունների ձգված արտասանությունը Ռաշտի-Փասիխանի բարբառում», *Orientalia*, հ. XII, Երևան, 2011թ., էջ 155-157:
3. **Գոլդուսթ, Ռ.**, «Դերանունը Փասիխանի բարբառում», *Orientalia*, հ. XIV, Երևան, 2013թ. էջ 52-58:

Роушанак Голдуст

Диалект Пасихана

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.06 «Древние и современные языки Азии».

Защита состоится 24 марта 2014г. в 15:00 часов, на заседании специализированного совета ВАК по лингвистике 019, действующего в

Институте языка имени Гр. Ачаряна НАН РА

(адрес: Ереван 0015, ул. Григора Лусаворича 15).

Резюме

Местность Пасихан находится в шахрестане Рашт, в западной части иранской провинции Гилян. Она занимает территорию около 125км² и объединяет 15 сел. Основная цель данной работы — синхронное и диахронное изучение диалекта Пасихана. Ранее гилянские диалекты не

подвергались научному исследованию и анализу, и данная работа представляет собой первую попытку обобщающего анализа в области гилянкой диалектологии и, в частности, пасиханского диалекта. Диссертация основана преимущественно на полевом материале, собранном в дехестане Пасихан провинции Гилян.

Во «Введении» приводятся данные о местоположении изучаемого региона и численности его населения. Здесь же рассматривается проблема места пасихани в системе гилянских диалектов в сравнительном контексте с другими прикаспийскими диалектами и языками. В упомянутой языковой системе диалект Пасихана наиболее близок диалекту Рашта, а также южно-тальшским и центрально-татским диалектам. В рамках данного раздела представлены попытки интерпретации и этимологического анализа наиболее известных топонимов региона. Далее дан подробный обзор работ, посвященных изучению гилянского языка, наглядно демонстрирующий, что в плане изучения собственно пасиханского диалекта представляемая работа является первым опытом.

Первая глава, озаглавленная «Фонетика», посвящена синхронному и диахронному анализу фонетики пасихани. На основе полевого материала дается подробный обзор фонетического состава указанного диалекта. Пасихани имеет 9 (**ū, ī, i, e, a, â, u, o, ə**) гласных и 23 (**b, p, m, v, f, d, t, z, s, ž, r, n, l, j, č, š, y, g, k, γ, x, ; h**) согласных.

Все фонемы подвергаются историко-сравнительному анализу. С точки зрения исторического развития выявлены нижеприведенные закономерности развития согласных: *z*- < др.-иран. **z*- < **g*-, ср. пасих. *zârnâ* “зять”, перс. *dâmâd*, *ǰ*- < др.-иран. **č*-, ср. пасих. *suǰ* “гореть”, перс. *suz*, *-hr*- < др.-иран. **-θr*-, ср. пасих. *šahr/šar* “город”, перс. *šahr*, **-pt*- > *-ft*- (в поствокальной поз.), **-vi*- > *-gu*-, **vy*- > **gy*- > *ǰ*- (в начальной поз.), **-šy*- > *-š*-, **fš*- > *s*-, **-fš*- > *-fš*- (в отдельных случаях), **-xš*- > *-š*-, **-rd*- > *-l*-, **-rz*- (ав. *rz*, др. перс. *rd*) > *-l*-, **-rs*- (с метатезой) > **-sr*- > *-hl*-, **dv*- > *d*-, так же **dv*- > *b*-, **rn*- > **rr*- > *-r*- и т.д.

Во второй главе («Морфология») представлен детальный анализ морфологии пасихани. Имя существительное в пасихани имеет следующие грамматические категории: число, прямой и косвенный падежи, неопределенный артикль. Прилагательное в исследуемом диалекте имеет трехстепенную систему сравнения и, как правило, ставится перед существительным, получая указатель –е. Местоимения имеют прямые и

косвенные падежи. Различаются личные, указательные, притяжательные, возвратные, вопросительные, неопределенные, определенные местоимения. В пасиханском различают количественные, порядковые, собирательные и дробные числительные.

Глагол в пасиханском диалекте имеет следующие грамматические категории: род, вид, время, лицо, число. Различают неопределенное причастие, причастия настоящего и прошедшего времени. Для образования видовых и временных форм глагола используются основы настоящего и прошедшего времени. Существуют семь глаголообразовательных префиксов: də-, di-, du-, va-, fa-, fu-, u-, ta-, ɕa-.

В пасиханском имеется три вида лицевых окончаний. Первое из них используется в образовании глаголов настоящего-будущего времени в изъявительном и сослагательном наклонениях, второе – в образовании глаголов прошедшего совершенного времени, а третье – прошедшего несовершенного времени. Эти окончания отличаются только в единственном числе, во множественном же числе – они идентичны.

Анализ каждой части речи иллюстрируется примерами из разговорной речи.

В третьей главе исследуются словарный состав пасихани и его словарные слои: небольшой субстратный слой, исконный слой, отличный от гилянско-армянского, а также общий с гилянским, пласт персидских, арабских и тюркских заимствований.

В «Заключении» диссертации подводятся главные итоги работы.

«Приложение» включает пасиханско-армянский тематический словарь.

Roshanak Goldust
The Pasikhan dialect

A thesis for PhD degree in Philology, speciality 10.02.06,

“The Ancient and Modern Languages of Asia (Iranian languages)”.

The defense will take place on March 24, 2014 at 15:00 at the address 0015
Yerevan, Grigor Lusavorich St. 15 at the special session of the Academic Council
(N 019 on Linguistics) of the Hrachia Acharian Institute of Linguistics.

SUMMARY

Pasikhan is located in Rasht district, in the western part of Gilan province of Iran. Its territory is about 125 km², and the Pasikhan dehestan includes 15 villages. The main objective of the present dissertation is the synchronic and diachronic study of the Pasikhan dialect. The Gilaki dialects have not been the object of a thorough scientific analysis before, and the present study thus can be considered as the first attempt of the research in the field of Gilaki dialectology, and, in particular, that of Pasikhan dialect. The dissertation is predominantly based on the fieldwork materials, collected in the Pasikhan region of the province of Gilan.

The description of the location and the population number of the area under study is presented in the “Foreword”. Further, a general outline shows the position of the Pasikhan dialect among other Gilaki dialects in comparison with other Caspian languages and dialects. Within this group, Pasikhani displays a number of similarities with the Rasht dialect and with the South Talishi and Central Tati dialects, as well. Several attempts of interpretation and etymological analysis of the best-known toponyms of the region are made within the framework of this section. Then a comprehensive overview of the works dedicated to the Gilaki dialects is presented, which clearly illustrates the lack of scholarly approaches to the Pasikhan dialect.

The first chapter, entitled “Phonetics”, focuses on the synchronic and diachronic study of the vowel and consonant systems of the Pasikhan dialect. The vowel system is represented by the following 9 phonemes: *â, a, ô, o, u, ê, e, î, ə*. The consonant system of the Pasikhan dialect includes the following 23 phonemes: *b, p, m, v, f, d, t, z, s, ž, r, n, l, j, č, š, y, g, k, γ, x, ’, h*.

In this chapter all the phonemes are examined in accordance with their historical development. Historical correspondences discovered in Pasikhani: *z- < OIr. *z- < *g-*, cf. Pasikh. *zâmâ* “son-in-law”, Pers. *dāmād*, *ǰ- < OIr. *č-*, cf. Pasikh.

suĵ “to be on fire, to burn”, Pers. *suz*, *-hr-* < OIr. **-θr-*, cf. Pasikh. *šahr/šar* “city”, Pers. *šahr*, **-pt-* > *-ft-* (in postvocalic position), **-vi-* > *-gu-*, **vy-* > **gy-* > *ĵ-* (in initial position), **-šy-* > *-š-*, **fš-* > *s-*, **-fš-* > *-fš-* (in separate cases), **-xš-* > *-š-*, **-rd-* > *-l-*, **-rz-* (Av. *rz*, OIr. *rd*) > *-l-*, **-rs-* (with metathesis) > **-sr-* > *-hl-*, **dv-* > *d-*, as well as **dv-* > *b-*, **-rn-* > **-rn-* > *-r-* and so on.

The second chapter (“Morphology”) examines the morphological structure of the Pasikhan dialect. Likewise many other north-western Iranian dialect noun in the Pasikhan dialect has grammatical categories of number, nominative and oblique case, indefinite article. Adjectives in the dialect under study have three degrees of comparison. As a rule, the adjectives come before the nouns with indicator *-e*. The pronouns have direct and oblique cases. Personal, demonstrative, possessive, reflexive, interrogative, definite and indefinite pronouns are differentiated in Pasikhani. The numerals, similar to the Persian language, can be cardinal, ordinal, collective and fractional.

The verb in the Pasikhani has the following grammatical categories: gender, aspect, time, person, number. Indefinite, present and past participles are distinguished. The present and past stems are used for the formation of the aspectual and time distinctions of the verb. There are seven prefixes, which form the verbs in Pasikhani: *də-*, *dī-*, *du-*, *va-*, *fā-*, *fū-*, *u-*, *ta-*, *čā-*.

Personal endings have three forms. The first one is used for constructing verbs in present-future tenses of the indicative and subjunctive moods, the second one – for verbs in past perfect, and the third – for past imperfect. Above mentioned personal endings are differentiated only in singular number and are identical in plural.

The grammatical material abounds with illustrative examples.

The third chapter is dedicated to the study of the lexicon of the Pasikhan dialect and its main substrates: not a large substrate wordlist, initial substratum, a substrate, which differs, as well as is common with Gilaki and borrowings from Persian, Arabic and Turkic.

In the “Summary” of the dissertation the main conclusions of the work are presented. The “Appendix” includes a Pasikhani-Armenian thematic wordlist.



Roshanak
Goldoust